

ցած և մազոտուած լինելով՝ քօշ\*) էին կոչվում և 130 թուին նահատակուեցին:

Ս. Թադէսս առաքեալին վերագրած կանոններին նայելով՝ Հայոց նախնական կամ՝ առաքելական գարու եկեղեցին բաւական կազմակերպուած է եղել և եկեղեցւոյ խրաքանչիւր անդամի պարագը որոշուած։ Հեթանոս՝ Հայերով շրջապատուած և կռապաշտ թագաւորներից հալածուած քրիստոնէութիւնը տեւեց մինչեւ Ա. Գրիգոր, աւելի ևս հալածանք կրելով Մեծն Խոսրովից և Տրդատից՝ որ մինչեւ խր քրիստոնէոյ գառնալը, երկու հրովարտակներով սաստիկ հալածանք հանեց ընդդէմ քրիստոնէից։

( Աը Հայութակուն ) :

Յ. Վ. Մ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱԿԱՑՄԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ.

### ՓԱՐԵԶ

( Յորականի մշակում ու Արտադրութեան Հ. - Զ. )

Փարիզեցու վարքի և բարքի առանձնայատկութիւնները նկարագրելլ այնպէս հեշտ չեւ այստեղ ըստ կարեւորութեան բաղադրիչ զանազանութիւնները աւելի ակներեւ և չափազանց են. պարապմունքները, մասնագիտութիւնները, կեանքի պայմանները այր մարդկանց վերայ զնումնեն իրանց կնիքը, Այս պատճառաւ, օրինակի համար, վեր առնենք հարուստ բուրժուայի ընտանիքից երիտասարդ տղամարդ, որովհետեւ նա ոչ մի գործի պատշաճած չէ, ուրեմն Փարիզեցու ցեղական յատկութիւնները նորանում աւելի է երեսւմ, քանիմէ ուրիշներում, նա ձիշտ այնպէս է, ինչպէս ամէն մէկ սիրուն կին ունի սահմաննեալ ժամանակը յար նա իւր մտերիմ բարեկամներին է ընդունում, եւ ի՞նչով է զանազանվում նա սիրուն կնոջից, Ի հարկէ նա այնպէս գեղեցիկ չէ, բայց բոլոր մնացեալ յատկութիւնների մէջ չըկայ զանազանութիւն։ Նորա պարապմունքը համարեալ թէ նոյնն է երր նա հոգս և անում իւր զարդարանքի, կաչ կարասիների, երեկոյեան ինչոյքների

(\*) Բովհաննէս կաթուալիկոս Գրաստանակերտցի. տպան Մոսկվայում 1853 թ. հրիս 22 — 23:

ամար. այն ժամանակ նորա բոլոր մտքի պաշարը ցամաքացած է լիւ-  
մաւ ։ Նա ամէն բանի մէջ չափաւոր է մինչեւ անգամ՝ յիմարութիւն-  
երի և ստահակութիւնների մէջ։ Աւելորդութիւնը վախեցնումէ նո-  
ան. նորա մէջ չըկան բուռն ցանկութիւններ։ Մնափառութիւնը, ի  
արկէ գեր խաղում է, բայց ոչ առանձնապէս մեծ գեր։ Նորա աչ-  
ում բոլոր կանայք մէկ մէկի արժեն. սէրը նորա համար նոյնպէս  
խորժ է, ինչպէս և համարամ կերակուրը, բայց մէկ ճաշարանին կից  
ան և ուրիշները։ Այսպէս անմեղ կերպով շուայլ կեանք վարելով մին-  
երեսնամեայ հասակը, նա մտածումէ ընտանեկան կեանքի մասին։  
մուսնանալով, տարուան եօթն ամիսը գիւղում նստելով՝ նա հաստա-  
ռումէ, ի՞նչ բանի ընդունակ է նա։ Իւր բոլոր կեանքում ոչ մի անգամ  
մտք չի արել մէկ բան սովորելու, անձամբ գործելու, իւր կամքը ու-  
նալու։ Խորհուրդ տուեք նորան մեծ ճանապարհորդութիւն անելու։  
որ օրինակ գեպի երուսաղէմ կամ գեպի Գահիրէ, նա անպատճառ  
կեսը ծամածուելով, նազելով (թելիկ—մելիկ գելով) կասէ թէ նա գե-  
պատճառ է համարում տեսնել երուսաղէմը կամ Գահիրէն Գրանսիական  
Օգերայի բեմի վերայ, Անցեալ սերունդը զերմաջերմ փոյթ ունէր պա-  
տապելու գրականութեամբ և քաղաքականութեամբ։ այժմեան սե-  
ռունդը մտիկ է տալիս դորան այնպէս, ինչպէս սիրոյ վերայ, որովհե-  
և սիրոյ հետ կարելի է ախորժ երեկոյ անցնել։ երբ որ գործ չըկայ։  
նորան պէտք է աւելի գրաւիչ վիպասանութիւն, բայց ոչ այնքան  
զգալի։ տիւուրը նա զժուարութեամբ է հասկանում։ Գուցէ նա կար-  
այ, „Modame Bovary“ Մարդամ Քօվարի, բայց երկրորդ անգամ կարդա-  
յու չի ախորժի։ եթէ յայտնուէր նոր պոլէ գե-կոկ, — աւելի վոյելու չ  
ի հարկէ այն ժամանակ նորա վիպասանութիւնը միշտ կըդտնուէր նորա  
սեղանի վերայ։ Քաղաքական տեսութեանց վերաբերմամբ յայտնի Է։  
որ նոքա գեռ 1848 թ. անհետացան. նորա դատողութեամբ։ քաղաքա-  
կանութեան մասին արտասանելու խօսքերը լաւ են միայն նորանով։  
որ նոցա օդնութեամբ կարելի է պաշտօն ստահալ կամ պատգամաւ որ  
զառնալ։ Մենք բաղդատենիք նորա ճաշակը, պարագմոնքը, իդէաները  
Փարիզի ստորին կարգի կնոջ ճաշտկի, պարագմունքի և իդէաների հետ։  
բացի գորանից նոցա դաստիարակութիւնն էլ նման է։ Նա նոյնպէս  
ուսել է լատիներէն, ինչպէս կին մարդը դաշնամուրի վերայ ածել։  
մէկը միւսին արժէ։ թէ մէկի և թէ միւսի դաստիարակութիւնը մեքե-  
նական պարագմունքներ են։ Այր մարդը եղել է Կոլեժում (բարձր  
ուսումնարան), իսկ կին մարդը մենաստանում։ Ծնօղները սովորա-  
ցրել են թէ առաջինին և թէ երկրորդին յարգել քաղաքավարութեանց  
հանոնը, խոյս տալ շուայլութիւնից, վախենալ չափազանց մեծ աշխա-  
տութիւններից։ Հասկացողութիւն ունենալ անուշահամ պատառների  
և անդադար մտածել պաշտօնի մասին, ինչպէս միւսին—ամուսնանալու  
համար։ Ինչպէս պաշտօնը, նոյնպէս և ամուսնութիւնը հառայումն

միայն յայտնի դեր խաղալու և առանց առանձին գժուարութիւնների ախորժ կեանք վարելու։ Երկուսն էլ բարձր բարիք են համարում նոր կառուվ Քուլօնի անտառի մէջ զրօսնուլը։ Գուցե աղջկայ ուղեղի ամենագաղտնի անկիւնի մէջ կը գտնուի դեռ որ և իցե պահանջ, վասն զի իրեւ կին՝ նորա զղերը խանգարուած են, իսկ ինչպէս օրիորդ — նորան փակած են պահում մինչև ամուսնութիւնը։ բայց ընդհանրապէս խօսելով — թէ պիր մարդը և թէ կին մարդը կարժեն մէկ մէկու։

Դեռ լաւ է, եթէ նորա հայրը կամ պապը կարողութիւն ունին. իսկ եթէ այն էլ չըլինի. եթէ նորան պէտք լինի պատառ հաց վաստակել, չեռք բերել ապրուստի միջոցներ։ Parvenir բարձրանալ — ահա զժնզակ խօսք, որ գտնվումէ իւրաքանչիւր մարդու բերանում. պէտք է գործէ ով ջանք է անում աւելի բարձր դիրք բռնել, աւելի ունենալ, Տասն և իններորդ դարը փշրելով մարդկանց որոշիչ կարգի շղթաները, արտօնութիւնները, անհաւասարութիւնը — բարձրացրեց սկզբունքը. — « թէ ամենայն ոք, որքան ստոր լինի նորա ծագումը, իրաւունք ունի ամենավսեմ և ամենաբարձր պաշտօններ վարել հասարակութեան մէջ »։ Բայց իրաւունքը իրմով ներկայացնումէ արդեան կեանքի անխսկական ընթացքը, — առաւել Փարիզի մէջ, քան ուր և իցե։

Եւ որպէս զի պարվենի բարձրանալ — Փարիզացին ունի երկու միջոց. Առաջինը օրինաւոր է, — այդ մրցողութիւնն է (concours)։ Այս կամ այն նախարարութեան մէջ կարելի է աստիճանաւոր դառնալ միայն հարցաքնութիւն տալով. Բոլոր կանդիտատների թիւը երեք հարիւրից պակաս չէ իւրաքանչիւր նախարարութեան մէջ, իսկ նախարարի անօրէնութեան ներքոյ, — տասնից աւելի պաշտօն չըկայ. Այս տասը բախտաւորները ծառայութիւն մտնելով՝ կըստանան երկու տարուայ ընթացքում տարեկան հարիւր յիսուն ֆրանկ և պարտաւոր կըլինին օրական ութ ժամ թղթեր արտագրելու երկու տարիից յետոյ, եթէ նոցա վարքը անբասիր լինի. կը հասնեն իրանց ցանկացած նպատակին այսինքն իրաւունք կունենան գրելու իրանց այցետոմների վիրայ բառս աստիճանաւոր (employé), և իւրաքանչիւր ամիս կըստանան ոռջիկ հարիւր ֆրանկ։ Միւնոյնն է պատահում ամէն գործունեութեան շրջանների մէջ. Ամէն ասպարեզների մուտքի վերայ — զօրքի մէջ, նաւատորմղի, ուսումնական տեսչութեան, բոլոր նախարարութեանց, ամէն պետական և մասնաւոր գործերի ձիւղերի մէջ կանգնած է մրցութիւնը։ Մրցութիւնը խաղումէ երկելի գիր մինչև անգամ նոյն իսկ անկախ մասնագիտութեանց մէջ։ Մարքիզ Ք. կամենումէ մրցանակ ստանալ իւր կովերի համար, դրսուշին ստանումէ mention honorable պատույ պարգևագիր հնդկահաւերի համար։ Այսպէս է Փրանսիայում ներկայ ժամանակում հասարակական կեանքի շրջանակը ամէն մարդկային կեանքը նորա մէջն է զետեղ վում. Նայեցէք կանդիտատների անձոռնի մերենական աշխատանքի վերայ, որոնք պատրաստվումեն մտնելու բարձրագոյն դպրոցներ։ յե-

առ գուրս գալով այն տեղից՝ զննեցէք խորին խոնջութիւնը, թուլութիւնը, անգործ այցելութիւնները սրճանների, բիւրօկրատիկական \*) կամ բացառական անգործութիւնը (իներցիա). Համեմատեցէք բազմարուեստեան դպրոցի ուսանողին, որ օրը տասն և չորս ժամ նստած է ֆօրմուլաների հետազօտութեամբ, ճարտարագործի հետ, որ կնոջ թել բոնած՝ գնումէ նայելու լաւ են տաշած արդեօք քարերը, Այս տեղից ծագումէ երկու հետեւանք՝ այսինքն մասնագիտութեան ընտիր ծանօթութիւն, գործելու կարողութիւն և համբերութիւն. բայց միւնոյն ժամանակ, ընդհանուր կրթութեան բացակայութիւն և մոքի սահմանափակութիւն, որ կետրոնացել է մէկ առարկայի վերայ. Դերասանը, պատկերահանը, հեղինակը, վաճառականը — քաջ գետեն իրանց գործը, բայց իրանց գործից գուրս — բոլորովին ոչինչ չըգիտեն. Նոցա գլխումը պահվումեն միայն լրագրական կարդացած ինչ ինչ յօդուածների հատուածները. որ և է գիտութեանց երբեմն չափազանց սխալ և թանձրամիտ փշրանքների մասերը:

Միւս միջոցը բացւուր բարձրանալու — ասպարէզն է, Այս ինքնազովութեան յայտարարութիւն է (քելայ), Լիւ դովիկոս ԺԵ-ի թագաւորութեան ժամանակ Գենգինէ անունվ մէկը գրելով փոքրիկ վիպասանութեան երգ. Confession de Zalmè, • անուն ստացաւ. Այժմ այնպէս հեշտ չէ անուն ձեռք բերել. Այժմ չէ կարելի յոյս գնել մի յայտնի խըմբի վերայ, այլ պէտք է ամբողջ ժողովուրդը ունել ի նկատի. Ի՞նչպէս պէտք է կարգադրել, որպէս զի հարիւր հազար մարդիկ յիշեն ձեր ազգանունը, իւրաքանչիւր ամառ վեցից մինչև եօթն հազար պատկերահաններ իրանց պատկերները հանդէս են հանում. վեց ամսվայ ընթացքում հազար երաժիշտներ ինչպէս միջատներ բզզումեն երեկոյին բազմաստեղնեան զահերի առաջ. իւրաքանչիւր օր քսան օրագրերում, յիսուն լրագիրներում — երեւումէ հեղինակների ամբողջ խումբ. Քոլորեքեան աշխատումեն յօդուածներով, կօնցերտներով (երգոց միաբանութիւն), պատկերներով, որպէս զի հասարակութեան ուշադրութիւնից փոքրիկ անկիւն գրաւեն. Այս ուշադրութիւնը վերջապէս չափից աւելի լցուել է. հասարակութիւնը աւելի էլ չէ կարող ընդունել. Փարիզումը ձեզ տեղ չըկայ, ոչ ոք ձեզ չի ճանաչում, գուրք ինչպէս պանդոկումն այս ինչ նումերն էք, այսինքն վերարկու և գլխարկ, առաւատը գուրս գնացող և երեկոյին վերադարձող. Այսպիսի վերարկուներ գլխարկներով՝ քսան հազարից պակաս չեն. Ի՞նչ նշան պէտք է հնարել, նոցա միմեանցից զանազանելու համար. Պէտք է աչք մտնել, դիւր գալ — ուրիշ հնար չըկայ. Ձեզ անուանեցէք Ֆլորիդոր Բարբանկրօտ կամ Էֆեմիուս Կօմբու, այսպիսի անուն չի մոռացվում:

\*) Տերապետող ոկզիունքը դիւանատան եւ գործնական դրագութեան.

Եթէ գուք նեգը (Խափչիկ) կամ մուլտ (Խառնուրդ արարի և եւրոպացու), լինէիք, այն ժամանակ աւելի լաւ կը լինէր, Վամսուն թուականի կիսին, երկրորդ կայսերութեան ամենափայլուն ժամանակը, Փարէզ եկաւ մէկ նեգը որ կոչվումէր ու բժիշկ, Բժշկականութեան մէջ նա այնքան հասկացողութիւն ունէր, որքան խոզը նարինչի, — բայց գորանով ու բժիշկը պակաս յառաջ չըգնաց և վեց ամսուայ միջոցում իւր համար կարողութիւն գիզեց, Հրատարակեցէք պյուս հիւանդութեան մասին մի նկարագիր, կազմեցէք բարեգործական ընկերութիւն, Ճառ խօսեցէք սեղանի վերջին կերակուրից յետոյ, տպագրեցէք այդ Ճառը ընկերութեան հաշուով, աւելացրէք գորա վերպայ մայրերին առաջնութեան մասին բանտխօսութիւններ, և նուիրեցէք մայրերին այդ բոլորը ուղարկեցէք իւրաքանչիւր ընկերութեան անդամներին, ամէն մէկ նոխարարին, ամէն մէկ դէպուտատի, ամէն խմբագրութիւններին, Այս — ինքնագով յայտարարութեան այրութենն է, Կարճէ ուշադրութեամբ կարդալ ձեռք ընկած Փարիզեան լրագրի առաջին երեսը, որ կարծանաք նկատել հազարաւոր, հարիւր հազարաւոր ձեռներ, որոնք չքանումեն հասարակութեան անուշադրութեան պատճառաւ, ձեռներ, որոնք իրանց անձը յայտնի կացուցանելու համար ամենափոքր առիթ են որոնում, որպէս զի գուրս գան դէպի թարմ օդ, Այս սնափառութիւն չէ, այլ կարիք Մեր ժամանակում հռչակը — ինչպէս և ամէն բան զրամ է բերում, Դիցուք թէ սովորական ժամանակ գուք պատկերը 1500 ֆրանկի կը ճախիւեք, աշխատեցէք, երեք յայտնի լրագիրներում ձեր վերայ քանի մի շաբթ խօսք ասեն, կցորդեցէք սորան փորք ինչ խորագիտութիւն, որպէս զի ձեր պատկերը գրուած լինի աշքի ընկնող տեղում, — և հաւատացած կացէք, որ հետեւ պատկերը գուք 4000 ֆրանկով կը վաճառէք, Վարկը այնքան անգամ աւելանումէ, որքան անգամ յայտարարութիւնը ունի աւելի շաբթեր, — իսկ համեմատութիւնը բաւական յայտնի է, Ճակատագրի պէս, բռնաբար մնումէ յիշողութեան մէջ այս ինչ ապրանքի կամ տեղի անունը, երբ ամբողջ տարի պատահումէ այն՝ ամէն օր տների պատերի վերոյ, լրագիրների մէջ, շոգեկառքերի ու սրճարանների մէջ, Թուք չէիք կամենալ յայտարարութիւններ կարդալ, — սակայն կարգացիք, գուք աշխատեցիք մոռանեալ նորան, — բայց չը մոռացաք, գուք յայտնապէս ծիծազումէիք նոցա վերայ, — այս աւելացրից նորա անունը, Թուղ այժմ ձեզ հանդիպի այդ իրը, ումից խորհուրդ հարցնէք, ուրիշ անուն չըկայ յիշողութեան մէջ, գուք շտապումէք գնել նորան, գուք ձեզ ու ձեզ ասումէք, որ եթէ այն իրը այնպէս յայտնի է, ուրիմն ուրիշից վատ չէ Դեռ այժմ էլ կարելի է պատահել Փարիզեցիների, որոնք բժշկումն Եերաւայի գեղորայքով, ինչպէս 1820 թուականին, Անունները երկար միջոց մնումն իշողութեան մէջ, այսինքն նոցա նզյնպէս դժուար է գուրս ձեզ դլիսից, ինչպէս և ընդունելը:

Ե հարկէ Փարիզում ինքնագով յայտարարութիւնները չեն հասել այն աստիճանի, ինչպէս Անգղիայում և առանձնապէս Ամերիկայում և հաղիւթէ երբ և իցէ հասնի այն շափի, Փարիզի մէջ մէկ քանի ընկերութեան դասակարգերում անտեղի խօսքերը ( ուժի ) աւելի անախորժ են քան Ավկիհանոսի միւս կողմում, եւ այնու ամենայնիւ Փարիզումը ինքնագով յայտարարութիւնները պակաս հարկաւոր չեն, Հաղար հինգ հարիւր Փարիզեան բժիշկները տարեկան հաղար երկու հարիւր ֆրանկից աւելի չեն շահվում, այն ինչ հարկաւոր է նոցա ամեն օր հագնել ֆրակ և սպիտակ փողպատ, երկու հաղար պատկերահաններ նկարու մեն պատսպարներ ( տարմա ), նշանակներ ( նամակներ ), պատկերներ — հատը հնդական ֆրանկի, Ի՞նչպէս կառավարուել այս տեղին հնչպէս ունենալ ամենակարեւոր միջոցները կեանքի համար, Ակամայ հարկաւոր է դիմել ինքնագով յայտարարութիւնների, կամ թէ սովամահ կորչել, Որ և իցէ նպատակի համելու գլխաւոր միջոցները մրցութիւնն ու ինքնագով յայտարարութիւններն են, որ միատեսակ հետեւանք են յառաջ սերում, այսինքն գրգում և փշացնումեն մարդուն, Մրցութիւնը յառաջ է բերում բթամիտ գործաւորներ իսկ ինքնագով յայտարարութիւնը ( քոլոմա ) — նենգամիտ խարերաներ, Այսպէս են Փարիզեան կեանքի պայմանները, Նորա շափազանց անպատեհ տպաւորութիւն են գործում բնաւորութեան և առողջութեան վերայ, Ֆղերի սաստիկ ձգտողութիւնը պատառ հացի համար, մշտական հոգսը անդադար մաքառումը, փողոցային կեանքի շափազանց զարդացումը, գրգուած սնափառութիւնը, որ միշտ հրապուրումէ և զարթացնում, վերջ ի վերջոյ կատարելապէս փոխումեն մարդուն, տալիս են նորան առանձնայատկութիւն և ընթացք, որոնք չեն հանգիպում ուրիշ մարդկանց մէջ և կաղմումեն. Փարիզեցու որոշիչ նշանը, Նորա կրթութիւնը սահմանափակ է, բայց սրամիտ, Նորա զղերը վերին աստիճանի լարուած են, սակայն նա ուրախ է, անհոգ է, միակերպ տենդային գրգիռով իւր ուժից բարձր աշխատանքի և աւելորդ վայելչութիւնների մէջ է ձգում իւր անձը, նա սիրումէ միայն Փարէզը, և միայն այստեղ կարո՛ղ է ազրել, վասն զի Փարէզը իւր տենդային գործունէութեամբ, իւր կենցաղավարութեամբ, իւր համաշխարհական նշանակութեամբ, իւր հասարակական և փողոցային կեանքով — ստեղծագործումէ այն զարթուցիչ և ախտակիր մժնովորտը, որի մէջ Փարիզեցին իւր անձը ազատ է զգում:

Տասնուիններորդ գարում որոշիչ դասակարգութեան շղթաները փշրուեցին, ազնուապետութիւնը կորցրեց իւր արքունական նշանակութիւնը, բուրժուան ( միջին դաս ) ձեռք բերեց քաղաքական ազդեցութիւն և գործաւ կառավարչական անդամ, մշակը արդէն ( տառապ ) ստրուկ չէ, ինչպէս ՓԲ. գարումը, այլ նոյնպէս քաղաքացի, ինչպէս առաջին հանդիպող գուքոր կամ մաքրիզը, Փողովրդոց դասակարգերի

մէջ պահպանուեց զանազանութիւնը, բայց նա կորցրեց քաղաքական և պետական նշանակութիւնը և ստացաւ պայմանական բնաւորութիւն։ Այժմ, ել ո՞վ է խօսում Փրանսիական ազնուապետութեան դերի և ազգեցութեան մասին, նա երեւումէ զառամեալ և անպիտան մնացորդ ընկերական կազմուածքի՝ որ չունի դպրութիւն, ապրելուց դադարել է։ Փրանսիական ազնուապետութիւնը — ոչ այլ ինչ է, եթէ ոչ դասական նախապաշարմունք (предразъ судокъ), նորան չի կարելի համեմատել օրինակ, անդղիական ազնուապետութեան հետ, որ պահպանել է ոչ միայն իւր արտօնութիւնները, այլ և իւր քաղաքական ազգեցութիւնը։

Փրանսիական ազնուապետութեան յատուկ բնաւորութիւնը, նորա պատմական դերը և դարաւոր սովորութիւնները, սկզբում՝ պատճառ էին նորա չափազանց բարձրանալուն, իսկ յետին ժամանակներում՝ պատճառ դարձան նորա կատարեալ անկմանը։ Այն ժամանակ երբ անդղիական բարօնները սերտ միացած ի մի մարմին մարտումէին իրանց յաղթականաց հետ, — Փրանսիական բարօնները թշնամացած միմեանց հետ՝ մէկզմէկու ոչնչացնումէին։ Փրանսիան ինչպէս տէրութիւն կազմուեց մէկ, պատահարար առաւել ուժեղ բարօնութեան նուաճելովը միւս մի քանի տասնեակ բարօնների։ Այսպէս, բարօն Դլ—դե—Փրանս լաւ քաղաքագետը, Մեծին Կարոլոսի պալադին (պատուղյա ասպետ), զէնքով նուաճեց կամ ազգականութեան կապերով ստացաւ Գաղղիայի միւս մասերը և կազմակերպեց Փրանսիան։ Երբ թագաւորը թոյլ է, ազնուականները լիդա (1) են կազմում նորա դէմ։ իւրաքանչիւրը մտածումէ միայն իւր անձի վերայ և առաջին դէպքում միաբանութիւնը անհետանումէ։ Այսպէս Լիւդովիկոս Ժնի դէմ ապստամբելով, նոքա միմեանց դէմ կովումեն և իրանց զէնքը ուղղում՝ են հենց իրանց ընկերներից մէկի դէմ, որին ապստամբ են համարում։ Բուրբոննեան հզօր դուքսից պաշտպանուած, ազնուականները կազմեցին «հասարակութեան բարութիւն» Bien public կոչուած դաշըրաց Լիւդովիկոս Ժն ճարտար քաղաքականութեամբ քանդեց ոչնչացրեց։ Կազդուրուելով շնորհիւ տասն և վեցերորդ դարու անիշխանութեան՝ նոքա իւրաքանչիւրը առանձին իրանց անձը վաճառումեն, Հենրիկոս Դին։ Հերցոգ Գիզը հարիւր հազար էքիւի 2) Մային — մէկ գա-

1) Լիդա, Գլ. Տիրապետող անձանց դաշնակցութիւնը, կամ թագաւորութիւնների ընդհանուր թշնամու դէմ պաշտպանուելու համար կամ նորա վերայ յարձակուելու երբ դաշնակիցները ունին ընդհանուր կրօնական կամ քաղաքական շահ։ Սուրբ Լիդա, Փարիզու կաթոլիքական կուռակցութեան դաշնակցութիւն էր, որ կազմուեց 1576 թ. Հերցոգ Հենրիկոս Դիզի ձեռքով։ ըստ երեւութիւն այն դիտաւութեամբ, որպէս զի նա կաթոլիքական կրօնը պաշտպանի Հուգենոանների դէմ (բռուգական կալվենականաց)։

2) Էքիւ Ֆրանսիական արծաթիալ դրամ է Լիւդովիկոս Ժնի ժամանակ կորա 3 հլ. 6 ֆրանկ արժուագութեամբ։ Վերջին ժամանակները փոխուեց Էքիւն Յ ֆրան-

առիւ միւսը մէկ վանահպրութեան և տիտղոսների. Չորս անգամ տպատամբու մեն Մարիա Մէդիչի դէմ, յետոյ Իշխլիէի դէմ և գաշնակցութիւն կազմում, Փրօնքա 1) են հաստատում և ամէն անգամ նոցանկութ են անում զանազան կաշառների ճանապարհով. Բարօնները յինելով համարձակ, սրամիտ և շռայլ, աւելի չէին քան յաղթուած և կաշառուած փոքրիկ թագաւորներ, իսկ յետոյ պալատականներ, որոնք բարեյաջող դէպքում իրանց տիրոջ դէմ խոռվութիւն էին յարուցանում. Անդղիական բարօնները իրանց ոյժը պաշտպանումէին ժողովրդականութեամբ, իսկ Փրանսիական ազնուականները. ընդհակառակը, մեծացնումէին իրանց անժողովրդականութիւնը անզօրութեան հետ, նոքա համարեա թէ, միշտ ազգի թշնամիների հետ մըտնումէին գաղտնի դաշնակցութիւնների մէջ.

Այդ ազնուականութեան ներկայացուցիչները՝ բուրգօննեան Ներգօգները հօրից առ որդի՝ Անդղիայի բարեկամներն էին և քիչ էր մնում կորցնէին Փրանսիան. Կարոլոս Յանդուզը իւր Փրանսիական ծագումից հրաժարուեց և ասումէր թէ, ինքն Փորթուքէզ է, և կազմումէր Փրանսիայի բաժանման նախագիծը. Տասնուվեցերորդ դարու վերջումը նոքա խոռվութիւն են յարուցանում Փիլիպպոս Բ. ի դէմ. Հետեւեալ երկու թագաւորութիւնների ժամանակամիջոցում — նոքա Խսպանիական կառավարութեան թոշակովն էին ապրում, նոցա ներքին քաղաքականութիւնը ունի նոյն բնաւորութիւնը, նոքա կեղերումեն ժողովրդին և թագաւորութեանը, նոքա բնական թշնամի են քաղաքակրթութեան կարգին և հասարակաց խաղաղութեանը, նոցա սուացած ամէն մէկ հարուածը մի և նոյն ժամանակ բարերարութիւն է երկրի համար. Խարօնների (թագաւոր) ժողովրդականութիւնը հիմնած է ազնուականութեան անժողովրդականութեան վերայ. Այս տեղից անխուսափելի է հետեւանքը. կենտրօնական թագաւորական իշխանութիւնը զօրանումէ ի հաշիւ նոցա անզօրութեան. Չորեքտասաններորդ դարում փոքրիկ Ֆէօդալի 2) բռնաւորներին ստորագրութիւնը վերջնականապէս թագաւորութիւն է կազմում, իսկ ներքին երկարատև խաղաղու-

լանոցի. սական սովորութիւնը հաշուելու էֆիւ դրամով պահպանուել է եւ մինչեւ զայժմ. բայց ընդունուած է այդ դէպքում : Թ և 3 Փրանկի:

1) Այս բառի բացատրութիւնը տիս Արաքատի Մայիսի բանասիրականի մէջ. երես 202:

2) Ֆէօդալ. Լատ. Ֆէօդալականութիւնը Ե. դարում Արեւմտեան Եւրոպապում կապանումէր նորանում, որ երկիրնը որոնք պատկանումէին արդէն կործանուած Հռովմէական կայսերութեան եւ նուաճած Գործանացին Պից, թ. ժանվումէին զօրավարների մէջ ցմահ տիրելու. եւ այսպիսի հողի մասը ստացաւ Ֆէօդ անուն. Ֆէօդալ. պահնկն է իշխան Փէօդի. որ պարտաւոր էր Թառապել թագաւորին. պատերազմի ժամանակ հանել յայտնի զօրքի թիւ. պահպանել իւր ժամանով. եւ նա ինքը ուղաջնորդէր. Փոքր առ Փոքր Փէօդները դաշտու ժառանգական կալուադներ Ֆէօդականը:

Թիւնը տալիս է Վալուայի տանը արտաքին կարգի կարողութիւն։ Այսպէս քաղաքակրթութիւնը և կենտրօնական իշխանութիւնը ընթանածին լծորդ, և այս շարժողութիւնը չե դադարում։ Լիւզովիկոս ՓՖԻ ժամանակ նահանգական շտատները ։), սովորութիւնները և քաղաքի արտօնութիւնները, Կորպօրացիաները ։), պարլամենտները ( Տայրագոյն ատեան ) խոչընդոտն էին լինում կենտրօնական իշխանութեան։ Բայց յեղափոխական խռովութիւնը և կայսերութիւնը վերջնականապէս ոչնչացնումեն այդ արտօնութիւնները։ Աւժաթափ եղած, կործանուած, բարդյապէս ընկճուած ազնուականութիւնը, — տեղը և նշակութիւնը զիջաւ իւր մշնամուն, — մէջչանինութեան ( ստորին արուեստաւորաց դասը ) և այս մեջչանութիւնը երեսումէ այժմ Քրանսի-այի տիրապետող դասը։ Նորա բարձրացան առ սակաւ սակաւ յամառ շարունակ մաքառելով ազնուականութեան դէմ, դաշնակցելով թագաւորական իշխանութեան հետ։ Այդ իշխանութեան հօգանաւորութեան ներքոյ կազմուեց, զօրացաւ, և մի և նոյն ժամանակ մաքառելով ազնուականութիւնը, հարստացաւ, կրթուեց, իսկ կրթութեան և հարսութեան հետ միասին ձեռք բերեց նշանակութիւն և ազդեցութիւն ։ Այսպէս արուեստների և վաճառականութեան կենտրօնները գտնվումէին նոցաձեռքում, Տայրագոյն ատեանները նոյնպէս, և մի և նոյն ժամանակ իշխանապէս ազնուակետութիւնը—քարուքանդ անելով ժողովրդին՝ իմրուե Վերսալում առ բելի լեվ դո գրան րո, այն ժամանակ երբ որ նա կողուատումէր տէրութիւնը, պատերազմումէր, գաղտնի դարան էր գործում, — երբորդ դասակարգը փոքր առ փոքր ստանումէր նշանակութիւն և զօրութիւն, և ՓԲ դարու վերջում նա արգեն պատրաստ էր կոիւ մանելու միայն ազնուակետութեան և հոգեորականութեան հետ, այլ և թագաւորական իշխանութեան։

І. І. юзаку էին պատճառները առաջին յեղափոխութեան (революція) որ փոխեց գլխից մինչև ցած հին Փրանսիայի կազմուածքը, կատարեալ հաւասարելով օրենքի առաջ բոլոր քաղաքացիներին, ազնուականութեան և հոգեորականութեան արտօնութիւնները ջնջելով, կարգադրելով սահմանադրական իրաց կարգեր։ Այս յեղափոխութեան հետեւանքներից մեկը եղաւ այն, որ առաջին, միմեանց հետ թշնամացող դասակարգերը կորցնելով իրանց արդարացի և օրինաւոր նշանակութիւնը՝ փոխուեցին քաղաքական կուսակցութիւններին, որոնք առաջուան պէս թշնամի էին միմեանց և առաջուան պէս նշանաւոր աստի-

1) Ետաս. Գերմ.՝ առանձին նահանգներ, որոնք կազմում են մէկ մէկ պետական դաշտականութեան, օրինակ չելիսիսապին Ամերիկայի շտատները, Շվեյցարիայու եւն:

2) Կորպօրացիա. Լատ. *Ընկերութիւն*. ոք առանձին կանոնադրութիւն եւ ուանձին իրաւունք ունի:

շանի ազգեցողներ Քրանսիայի ճակատազրի պերայի Յեղափօխական անիշխանութիւնից ուժաթափ եղած Քրանսիան որս գարձաւ զիբուտորին (իշխանապետ)։ որ իւր անձը կայսր հրատարակեց։ — Եւրոպական հօալիցիան (1) ոչնչացրեց կայսերութիւնը և Բուրբոնների գահը վերահաստատեց, բայց ոչ ընդգերեար։

Կարուլու Ժի սխալը ի գերեւ չ անեց բէստավրացիան և նոր Յեղափօխական ալիքները գահ բարձրացրին Բուրբոնեանների կրտսեր շառափիջ Օրլեաններին, որոնք հաւատարիմ եին ազատասեր պարլամենտական միապետութեանց։ Նոցանից յետոյ յաջորդեցին դարձեալ իուսկութեան բորբոքը, թոյլ և կարծատե հասարակապետութիւնը, ապա երկրորդ կայսերութիւնը և վերջապէս երրորդ հասարակապետութիւնը։ Այս բոլորը հաստատապէս կարգի զբին և վերջնականապէս սահմանեցին Քրանսիայում՝ քաղաքական կուսակցութիւններ։

Նախորդ հզօրագոյն ազնուականութեան սերունդները, կործանուած յեղափօխութիւնից և կայսերութիւնից, թշնամի Օրլեանեան իշխանազանց տան, որոնց ապստամբ են համարում գէպի անդրանիկ ճիշդը որ սպասումէ իւր նշանակութեան և զօրութեան վերադարձուցմանը Բուրբոններին նոր բէստավրացիայով, փոխուեցին Լեզիտիմիստների, պարինքն մտերիմների «օրինաւոր» միապետութեանց, միապետութեան յաջորդների Լիւդովիկոս ԺԴի, Իրանց կողմից Օրլեանեան իշխանականներն էլ ունին իւրեանց համախոչները, ըստ մեծի մասին հարուստուրժուազիայի մէջ, ինչպէս Բօնոպարտեանները — իրանցը, մանր բուրժուան, մեծ մասամբ կազմումէ հասարակապետականների զօրքը։ Վերջապէս մշակ դասը, որ զբաղուած է ոչ այնքան քաղաքականութեամբ, որքան տնտեսական յարաքերութիւնների վերստին կազմակերպութեամբ, իրանից կերտումէ սոցիալիստներ (2)։

Այսպէս, ժամանեակից Քրանսիական ազնուապետութիւնը գասակարգ չէ, այլ միայն քաղաքական կուսակցութիւն, չքայլու անցելոյ

1) Կուլիցիա։ Լատ. քանի մի պետութիւնների դաշնակցութիւն աշտեքազմելու համար ընդդեմ որ եւ իցէ ուրիշ թագաւորութեան։

2) Սոցիալիստ, է համախոչ սոցիալական վարդապետութեան։ Առցիալական վարդապետութիւնով (սոցիալեզմ, լատ.) երկու վարդապետութիւն են հասկանում, որոնցից առաջինը պահանջումէ ամենայն մասնաւոր սեպակ մնութեանց ջնջուելը եւ կրումէ ուզոմունիզմ։ անունը Այս բառի ընդարձակ բացարձութիւնը ունի Արարատի պատարուաց Մայիս ամսի բանասիրականի մէջ։ Երես 205։ Երկրորդ վարդապետութիւնը աշխատումէ փոխակերպել սեպականութիւնը եւ ընտանեկան յարաքերութիւնները ասսօցիացիայի (միութեամբ քանի մի անձանց) միջնորդութեամբ։ Այս էսկ վարդապետութիւնն է յատկապէս սոցիալիզմը։ Բայց թէ առաջինը եւ թէ յետին վարդապետութիւնը հէ միայն անպատշաճ են պորդնական կերպնի, ոյլ եւ վնասակար։ Այսա օրինակը կածող է լինել Ֆրանսիան ուր մէկ ու միւս սիստեմն էլ առաջնորդեցին միայն կորստական հետեւանդների։

մնացորդը Դեռ վերջինու ժամանակներում այդ ազնուապետութիւնը խմբուել էր սպիտակ զրօշի և Քուրքօնեանց վերջին ներկայացուցիչ կոմն Շամբօրի շուրջը, իսկ նորա մահի հետ Լեգիտիմիզմը : ) կորցրեց բոլոր յոյսը Քետավբացիայի Լեգիտիմնեան միապետութեան, նախա- մտադրած միութիւնը Լեգիտիմիստների : ) Օրլէանեանների հետ հաղիւ թէ կըկայանայ երբ և իցէւ Փարիզի կոմնը հանգուցեալ կոմն Շամբօրից Փրանսիական գահի իրը ժառանգ ճանանչուած՝ բնաւ չի հրաժարուիլ Օրլէանեան տան քաղաքական աւանդութիւններից, ազատասիրական սահմանադրական միապետութիւնից, իսկ Լեգիտիմիստները իրանց կողմից չեն հրաժարուիլ ոչ սպիտակ գրօշից, ոչ աւանդական ճիշ զից, ոչ կղերականութիւնից, նոցա գաշնակցութիւնը կղերականութեան հետ ունի իսկապէս նոյնպէս իւր պատմական պատճառը:

( 七 )

( P-A-T-F-S. ) Q. S. K. L. Q. w. R. w. R. k. m. u. g

## ՖԱԲՐԻՑԻՈՆԻ.

ԴՐԱՄԱՑ ԵՐԵՎԱՆ ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.

ՀԵՂԻ ՏՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱԴՕԾԼԱՑ ՎԵԼԲՐԱՆԴՅԱՆ

ԳՈՐԾՈՂ. ԱՆՁԻՆՔ.

Ելինչտէյն, գատաստանական քննիչ:  
Տոլֆ, գործաբանատէր,  
Իգա Իէյնգոլդ,  
Ագաթա Շտերն,  
Զուգօ, նորա որդին,  
Գարբիցիուս,  
Ցիկին Վոլմուտ,  
Դեմյէր՝ սենեկապան Տոլֆի,  
Արէլ, Տոլֆի այգեպանը,  
Քէմիէն. ) ձեռնոց շինողներ,  
Պրեգերիկա )

1) Հեղինակի միջմատ - Ամսության գաղտնաբառը կամ պահպանության ժամանակը և այլ առանձին առավելությունները կազմության մեջ պահպանվելու համար առաջարկվում է առանձին առավելությունները:

2) Լեզվովիմբառ. Գերբ. Հաւատարիմ թագաւորող տան օրինաւոր աղդատուհին . Շահը . Թարգմ.